

ՄԵՐ ԳԱՐԱԿՈՅ ՍՈՒԳԸ

(Հայրիկի եւ Պոօշտանցի յիշատակից)

Այստեղ, սգաւոր անհաս բարձունքից
Գումանի, մահանիշ զանդն է զօղանջում
Ու հետ որբերիս կեանքի խորշերից
Վիշտ ու տառապանք ողբի են կանչում։

Ու սկ ցաւերին որդեգիր դարձած,
Այս անձուկ հովտում դարերով փակուած
Մենք ողբ ենք հնչում՝ կոչին հնապանդ.
Դարերից ողբը մնաց մեզ պւանդ . . .

Ու լալա-հնչիւն մեր ողբի ձայնին
Տալիս են ձորերն արձագանք ուժգին.
Բայց հսկայ ժայռեր՝ լուռ, արձանացած,
Նայում են անշարժ վերից դէպի ցած։

Եւ այդպէս ահա դարաւոր վկան
Մեր տառապանքի, նահատակութեան՝
Լուռ է, անզգայ . . . մինչև երբ, արդեօք,
Մեզ պիտի տանջես, այ բախտ անողոք . . .

Յարութիւն Պետրոսեան.



ՄԵՐ ՄԵՇ ՀԱՅՐԻԿԻՆ

Լացող վաթանի կարօաը սրտիդ,
Անտէրունչ թողած կարմիր հայրենիք,
Եւ դեռ չտեսած շողքն ազատութեան,
Ինչու ես թըռչում, մեր ազիզ հայրիկ։

Ելի տնքում են հայրենի լեռներ,
Ելի գեղջուկը արիւն է լալիս,

Մեր ողբ ու լացին նահատակութեան,
Էլի լուռ վկայ վեհապանձ Մասիս.

Երազներիդ պէս մենք միշտ տարագիր,
Փախչում ենք թողած նախնեաց շիրիմներ,
Վիշտը մեզ ընկեր, ցաւը անկողին,
Մեր կեանքը զուլում, սըրտներս աւեր.

Բոկոտն ու նօթի երբ զուլում երկրից
Անտուն որբերդ հե ի հե կը գան,
Քո թեերի տակ հանգիստ առնելու.
Եւ կարօտագին «Հայրիկ» ձայն կը տան:

Եւ հայ գիւղացին արդար վաստակից
Յոգնած ու դադրած. իւր ցաւերը ծով,
Կորացած մէջքով, քո սուրբ շիրիմին,
Յուշիկ կը պատմի մունջ մըռմըռալով:

Դու, որ ապրել ես նրանց ցաւերով,
Միշտ հպարտ կանգնած նրանց թիկունքին,
Տես վերջին ժամին Քեզ յօտ են եկել,
Սուրբ երգ են ուզում Քեզանից կըրկին:

Վասարուրականից արծուի թեերով,
Էլ ով կուղարկի ողջոյն մեզ համար.
Էլ ով կըլսի մեր վիշտը անտակ,
Բաց, ովկեան սըրտով, ծերուկ վեհափառ:

Մենք ուխտ ենք անում դագաղիդ առաջ,
Որ միշտ կը սիրենք մեր խեղճ հայրենիք.
Եւ մուժ վաթանում քո ջահը վառած,
Միշտ վառ կը պահենք, անմոռաց Հայրիկ:

Գառնիկ.

Ճեմարան. 1907 թ. 2 նոյեմ.

